

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՂԱՄՈՒԿՆԵՐԸ ԺԳ. ԴԱՐԻ ՍԿԶԵՌՈՒՄ.

(Հարունակութիւն):

Ստեփանոս Օրբելեանի վեհախորխոս գրուած յետոյ անցան
երեք տարիներ, որոնց ժամանակից նոր ինչ չէ լսում: 1307
թուին արդէն սկսւում են այն աղմուկներն, որոնց մէջ գործող-
ներն էին դոյա սկզբնապահ առաքաները: Ստորև կտեսնենք,
որ այդ աղմուկները յառաջացել էին ոչ մի ուրիշ պատճառից, եթէ
ոչ բռնութիւն գործ դնելուց՝ իրագործելու մի գաղափար, որ նոր
չէր՝ այլ առաջ ևս եղել էր: Այդ աղմուկները ներքին էին և ոչ մի
ուղղակի օգուտ չունէին արտաքինների համար, սակայն նորա-
գոյն գրողները ձգտեցան օգտուել այդ գէպքերից և մարգոր-
տութեան խաբէական հիմունք դարձնել՝ իւրեանց նպատակների հա-
մար: Առաջին անձն, որ ջանաց օգուտ քաշել դոյանից, այդ յայտնի
հռչակաւոր եղութիւթ Կղեմէս Գաղանուսն էր (ժ. Գարում) որ երկու
հասորում ամփոփուած երեք մեծ գրքերով¹, ջանում է խեղաթիւ-
րել պատմութիւնն և Հռովմէական դուրս բերել Հայոց: Հարկ
չկայ այստեղ խօսել նոր ս գրուածքի մասին, սակայն որպէս զի
ընթերցողը փոքր ինչ ծանօթութիւն ստանայ գորա մասին, բե-
րենք գոնէ նորա յառաջաբանը:

1. Միաբանութիւն Հայոց ս. եկեղեցւոյն ընդ մեծի ս. եկեղեցւոյն Հը-
ռովմայ, Conciliationis ecclesiae Armenae cum Romana..... Romae, Typis S.
Congregationis de propaganda Fide. MDCL, որ հայերէն և լատիներէն է.
կայ և հայերէն առանձին: Դորա քննութիւնը՝ առանց այժմ ունեցածս
աղբիւրների արուած՝ Հռոտով լոյս կտեսնէ գերմաներէն:

Եւ զիմարդ գրիչս իմ անյարմարս կարող լինիցի երբէք պատմագրել ըստ պատշաճի զմեծամեծ յիշելիսն, որք ի վաղ ժամանակէն անտի պատահեցան յեկեղեցին Հայոց և զիմարդ մեք անհնազէտս յանձն առցուք ճառել զանցեալ ծածկագոյն իս իհուրդս այլասեռ ազգի, երբ մինչև ցայժմ ո՛չ կարաց փռանկ պատմիչ որ զբուն հարել ի սոյնպիսի օտար պատմագրութիւնս, Բայց սակայն յուսացեալ ի յօգնականութիւն ս. Աստուածածնին, յօժարապէս անորոշեցուք համարձակիլ և ի յայս անհուն ծովս մտանել, մանաւանդ զի զմեզ առաջնորդէ ոմն հայ պատմիչ, որ զրեալ էր ի վաղուց զշարագրութիւն ամենայն հայրապետացն Հայոց, ուստի մեք ի ձեռն առնթեր եղեալ լուսանց և մեկնութեանց մերոց, զոր ծայրաքաղ արարաք յայլոց պատմութեանցն Հայոց և փռանկաց, փորձեցուք զգործս զայս հասուցանել ի կատարումն, Արդ՝ վասն հաւատարմացուցանել ընթերցողաց զճշմարտութիւն ճառիս մերոյ, և թէ ի մէջ ոչ գրեալ եղև ստութիւն ինչ ի գիրքս, սակս այսորիկ պարտիմք ծանուցանել նոցա եթէ յորժամ առաքեցաք ի սրբազան Հոռովմայ պապէն Աբրեանոսէ ութերորդէ քարողել այլոց ազգաց զուղղափառ հաւատն Քրիստոսի, շրջեցաք պանտրխոսարար զարեւելեան աշխարհիւ, քարողելով զուղղափառութիւն, ուսուցանելով զաշակերտս, կարգալով զճառս այլազգ քրիստոնէից և որպէս ասէ Պօղոս, ընդ ամենայնի ամենայն լինելով վասն ապրեցուցանել զոմանրս, ևս առաւել բնակեցաք ի մէջ Հայոց ազգի ամս յոլովս ի բազում տեղիս, ի յաշխարհն Հայաստանեայց, և Ասորոց, և Արաց, և Պոնտացւոց, և Թաթարաց, և ի Սմիւռնացւոց և ևս ի յարքայանիստ քաղաքն Վ. Պօլսի, և իբրև ընթերցաք զգիրքսն նոցա, տեսաք եթէ ամենայն նախահարքն Հայոց, մանաւանդ որ սրբագոյնք և իմաստնագոյնք, եղեն միաբանեալք ընդ կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյն և դաւանեցին զուղղափառ հաւատն ս. եկեղեցւոյն Հոռովմայ, բաց ի սակաւուց ոմանց որ սնափառք և կեղծաւորք գոլով առաւելաբար սիրեցին զփառս իւրեանց և զխռովութիւն և զբաժանումն, քան զսէր և զմիութիւն եկեղեցւոյն Քրիստոսի, և ջանացին չար աղանդովք իւրովք աւերել զեկեղեցին իւրեանց, և գրով և անգիր սերմանել զորոմն մոլորութեանց ի մէջ քրիստոսասէր և գերազանձ ազգին Հայոց, որք պարզամիտ գոլով, ո՛չ կարացին ի միջոյ որոմնոյն չարափառացն այնոցիկ՝ ընտրել զբարի ցորենի, սերմանեալ ի մէջ իւրեանց յայնքան ս. հայրապետաց և առաքելաշնորհ վարդապետաց, որք ծաղկեցան յաշխարհիս Հայոց յիւրաքանչիւր ժամանակի, Վասն որոյ մեք հարկաւոր համարեցաք արտահանել ի պատմագրութեանցն Հայոց զոր ինչ հանգիպեցաւ յեկեղեցին իւրեանց ի սկզբանէ անտի, թէ չար, կամ թէ բարի, և առաջաբերել զայն ի գիրքս առաջի աչաց իւրոց, զի գիտացեն մերժել զչարն և ընտրել զբարի...

Այնուհետև ծեքելով պատմական տուեալները, հերետիկոս է գուրս բերում Հայաստանեայց ս. եկեղեցու հռչակաւոր հայրապետներին և հայհայում նոցա: Զորօր. Յովհանն Օձնեցու մասին ասում է. «Յոհանն Օձնեցի, սուտ և խաբեբայ վարդապետն՝ գոլով ի ներքս գայլ յափշտակող, ցուցանէր առ արտաքս զերեսս ոչ խարի, և ի ձեռն մեծի կեղծաւորութեան հաւատացուցանէր ամենեցուն զինքն առաքինի՝ վասնորոյ աղանդաւոր բանիւ և սուտ վարդապետութեամբ դարձեալ խաբեաց և մոլորեցոյց զպարզամիտ ազգն Հայոց...»: «Արդ՝ ել մէջ Հայոց աշխարհին այս օձաբարու վիշապս...» (էջ. 302):

Այսպիսի յիշոյցներն ի հարկէ խիստ դժգոհեցրին Հայոց և այդ էր պատճառն, որ ջամէեան ահագին գլուխներ նուիրեց, ջանալով «Ուղղափառ» այսինքն քաղկեդոնական դուրս բերել Կղեմէսի չարաքանածներին, ըստ որում և յաճախ յարձակւում է նաև Կղեմէսի վրայ, որպէս զի հանգստանան Հայերը: Ինչ և իցէ:

Կղեմէսը¹ չէ ուզում իւր յառաջաբանի մէջ յիշուած պատ-

1. Կղեմէսի բանավարութիւնը հիմնովին քանդելու համար գրեց Վէորդ վարդապետ Մխլէյիմ օղլին գիրք Վիճարանութեան, որի (առաջին կէսի) երկրորդ տպագրութիւնը «Ճշմարիտ նշանակութիւն Կաթուղիկէութեան» եղաւ 1750 թուին ի Վ. Պօլիս «ողորմութեամբ և տրովք քրիստոսասէր և բարեպաշտուհի Կիւլ Խաթունին, Զրի բաշխեալ, Այդտեղ ասում է հեղինակը «որովհետև պատրի Կղեմէսն զերիս մեծամեծ հատորս տպագրեալ է ընդդէմ Հաւատոց մերոց, ապա և մեք իւրաքանչիւր որ ըստ տկար և աղքատ կարողութեան մերում պարտի՛ք պատասխանել նմա՝ որչափ կարող եմք, եւ քանզի գլխաւոր զէնն, եթէ նորա, և թէ այլոց նմանեաց նորա, այս է, զի ասեն միշտ, թէ մեք Հայքս՝ ոչ եմք հնազանդ Կաթուղիկէ եկեղեցւոյ, վասն այնորիկ և մեք կամեցաք մեկնել ի մէջ այս գրքի, թէ զի՞նչ նշանակէ Ճշմարտապէս Կաթուղիկէ եկեղեցի ասելն, և ցուցանել, որ մեք Հայքս՝ քան զամենեւեան առաւել հնազանդ և հետեօղ եմք Կաթուղիկէ եկեղեցւոյ, (Տես. և «Արարատ», 1871. էջ. 29):

Եւ աղաչեմ զընթերցողս, զի մի՛ որ մեղադրեսցէ զմեզ՝ վասն սակաւութեան վկայութեանց գրքիս այսորիկ, զի ի մէջ բանտի շարագրեալ եմք զսա, ոչ ունելով զայլ գիրք բաց ի նոր Կտակարանէն...:

մութեան հեղինակի անունը տալ, և ինչու չէ ուզում: Ընթերցողը կկարծէ թէ անյայտ է եղել նորան հեղինակի անունը, սակայն կսխալուի, որովհետեւ այդ գրութեանը գրած պէտք է լինի կղեմէսը Հռովմում: Բայց և այնպէս թողնենք չիշեղու պատճառները: Համարենք թէ կղեմէս չգիտէր այդ անունը, գործնով նա ոչ մի վստահութիւն չկարէր գտնել հասկացող մարդկանց կողմից: Իրողութիւնն այս է, որ Չամչեան ֆրանս արաւ կղեմէսի գէմ և կղեմէսի տաճանների մեծ մասը Հայերի գլխին կապեց, ինքն այնպէս ցոյց տալով, որ իբր թէ պաշտպան է ելել Հայոց: Չամչեան այդ արաւ ոչ միայն իւր եռահատուր (կղեմէսի հետեւողութեամբ) պատմութեամբ, այլ և իւր «Վահան հաւատոյ» գրութեամբ, որ դեռ ձեռագիր է և որով իբր թէ պաշտպանում է Հայոց եկեղեցու մի քանի տարբերութիւնները:

Կղեմէսի անանուն պատմիչին լաւ ճանաչում է Չամչեան որ և նորան «արքանեակ չարի» է կոչում (Գ. էջ. 303.) Այդ անձը մեծ նշանակութիւն ունի մեզ համար, զի նորա տեղեկութիւնների վրայ են հաստատուած այն ամենն, ինչ որ թէ կղեմէսի և թէ Չամչեանի պատմութեան մէջ մեծ տեղ է բռնում:

Այդ անձն է Ներսէս Պալիկենց ունի թոռն, որ ամեն միջոցներ գործ դրեց Հայերին լատինացնելու համար, այդ նպատակով ևս ճանապարհորդեց արեւմուտք: Սորա թարգմանութիւնն է. «սկսանի գիրք պատմութեանց, որ կոչի ըստ Հայոց գիրք գաւազանաց, որ պատմէ զճայրագոյն քահանայապետացն, նա ևս և զկայսերացն Հռոմոց կարգ ժամանակագրութեան նոցին և զեղեալն նոցանէ, և առ նոքօք զիրս նորագոյնս և զարմանալիս: Զոր շարդրեալ է գիրքս զայս Ֆրաթէր Մարթինոս ի կարգէն քարոզողացն: Եւ թարգմանեցի զոյնս ի լատին լեզուէ ի հայս ես տրուպ Ներսէս Պալիկենց կոչեալ գաւառաւ Կիլիկիցի Սրոցի գոլով և կարգաւոր և աստիճանաւ լատինացի կանոնիկոս քահանայ, թէպէտ և անարժան իսկ»:

Այս թարգմանութիւնն արել է Ժ. Գ. դարի կէսերում «ստորին և անարգ ոճով»: Այս պերջերում գնում է և Հայոց թագաւորների ու կաթողիկոսների ցանկ՝ վայրիվերոյ տեղեկութիւններով,

լի սխալներով, այնպէս որ նոյն իսկ Հեթում Բ-ի (+1307) մասին խառնաշփոթ տեղեկութիւններ է տալիս և այդ խոստովանում է նաև Չամչեան, ասելով. «և առեալ բազում ինչ նաև ի լրոյ՝ շփոթ իմն գրէ և յաւելուածով, խառնեալ ինչ և ընդ գործս լեռնի հօր Հեթմոյ. և այն աղաւաղ շարադրութեամբ» . . . (Գ. էջ. 373):

Ս. Էջմիածնի մատանադարանում կան երեք գրչագրներ այդ պատմութեան. գոցանից միայն մէկն որ գրուած է 1421 թուին, (Ա. ՆՁ. 1744) ունի Հայոց վերաբերեալ պատմութիւնը: Այստեղ կարգում ենք Գրիգոր Անաւարդեցու մասին.

Տէր Գրիգոր ի Սըսոյ ամս ԺԳ: Սա էր Աստուածաբան վարդապետ, բազում երգս յօրինեաց ի հայո, և բազում պատմութիւնս (Վ) Թարգմանեաց ի Հռովմայեցոցն, ի Յունաց և յԱսորոց ի մերս, և պայծառացոյց կարգօք զեկեղեցի Հայոց, և բազում անգամ ջանաց միաբանել ընդ մեծ եկեղեցոյն Հռոմայ, զոր խնդրէր Յովհաննէս ԻԲ. պապն, և կամէր ժողով (sic!) հաստատել, զի կատարեալ լցցեն զնոյնս. որ է այս:

Ապա դնում է.

«Թուխտ տեառն Գրիգորի և կոակ, զոր գրեաց առ Թագաւորն Հեթում»:

Պարզ երևում են վիթխարի սխալները նոյն իսկ այդ փոքրիկ պատմութեան մէջ: Անաւարդեցուն խառնում է Գրիգոր Վկայասէրի հետ, այլ և Յովհաննէս ԻԲ. ին, որ գահակալել է 1316—1334 թիւը, դնում է Անաւարդեցուն ժամանակ, որ վախճանուել է 1306 թուին: Այդտեղից արդէն տեսնում ենք, թէ որքան կարող ենք վստահ լինել Ներսէս Պալիէնցի պատմութեան վերայ:

Պալիէնցի բերած թուղթն ոչ մի ապացոյց չունի թէ Գրիգոր Անաւարդեցունն է, ոչ արտաքին և ոչ ներքին. ոչ մի պատմիչ է յիշում թէ Անաւարդեցին մի այդպիսի թուղթ է գրել Հեթումին և այս հանգամանքը մեծ նշանակութիւն ունի մեզ համար, զի ներքին պարագաներն ևս խիստ աննպաստ են: Քանի որ բազմիցս ժխտել եմ այդ թղթի հարադատութիւնը, հետամուտ լինենք և տեսնենք թէ ինչ եղբակացութեան կգանք:

Թուղթն սկսում է (ըստ գրչագրին․) այսպէս․

«Գրիգորիոս ծառայ օրհուսի Քրիստոսի Աստուծոյ և տեառն մերոյ, և ողորմութեամբ նորին Կաթողիկոս Ամենայն Հայոց մերոյ և սրբոյ եկեղեցւոյ յոյժ պարծանաց՝ հոգւոր և անդրանիկ որդւոյդ, ճշմարիտ քրիստոսասիրիդ, տեառն մերոյ թագաւորահօրդ աւագ պարոնիդ ամենայն Հայոց։ Յուսամք և մաղթեմք Աստուծով լինել և մնալ ձեզ միշտ ամբողջ, անվրդով և անվորձ»։

Այսքանս գրաբար է և ապա սկսւում է ռամկական մի անձոռնի ոճ, որ իսկոյն մատնում է թղթի անհարազատութիւնը, ղի լաւ գիտենք՝ որ թէ Հեթում թագաւորն և թէ Անաւարդեցին շատ գեղեցիկ գրաբար գիտէին և ոչ այսքան միայն, այլ երկուսն ևս թէ ուրիշ դէպքերում և թէ իւրեանց յիշատակարանները գրաբար էին գրում։ Անաւարդեցին ուսեալ անձնաւորութիւն էր, գեռ նորա եպիսկոպոս ժամանակ Սշին՝ Կանչոյ իշխանը նամակ ունի գրած նորան՝ գեղեցիկ գրաբար լեզուով։

Պարծանք իմ ի Քրիստոս՝ յուսոյ տեղի հոգւոյս նուազս,

Գլուխ պատկառելի փոխան գլխոյն տուեալ մեզ աստ.

Պետ վսեմական ի տանն Տեառն ամենիմաստ.

Հովիւ բանականացս առնող հոգւոյ գալլոցն աստ.

Տնտես հաւատարիմ պատուիրանացն գալ զգաստ,

Ի վերայ կալ ծառայից, սովեալ հոգւոց լինել նպաստ.

Զխոցոտեալսն որ ի դիւայ՝ բառնալ յուսիդ իբր զգրաստ.

Ի պանդոկ եկեղեցւոյ տալ սպեղանի զբանն պատրաստ.

Հովուին ամենեցուն դու գաւազան երկաթի հաստ.

Իբրև զանօթ բրտի փշրել զապտտամբեալսն որ գան ի գաստ.

Աստ խրատել իմաստութեամբ, և ի չարէն պահել ուրաստ.

Մինչ ի վերին ածել Սիօն և ի յերկնից մեծն առագաստ:

Այսպիսի հռչակասքանչ աստուածազգեսաց հայրապետիդ՝

Սրբոյ Լուսաւորչին պատշաճաւոր երէց որդիդ՝

Նախ զգործն առքերելով՝ և ապա զանուն հայրապետիդ ... 4:

Այս գովասանական թուղթն արդէն ցոյց է տալիս, որ գրաբարը

ստորական էր այդ կաթուղիկոսի և իշխանների գրութեանց մէջ։
Իսկ թէ Հեթում ևս լաւ գրաբար էր գրում, տեսնում ենք թէ
նորա ոտանաւոր պատմութիւններից, որ յաճախ յիշեցի, և թէ
նորա յուշագրութիւններից, որոնք մնում են Աստուածաշնչի յե-
տեւում։ Աւրեմն բոլորովին անբնական բան կլինէր, եթէ Անա-
ւարդեցին ռամկական ոճով գրէր այդ նամակը, մանաւանդ որ
առաջարկում է իւր այդ նամակը տանել և ցոյց տալ վանական-
ներին, (որոնց համար իսկապէս գրած է այդ թուղթն ըստ գը-
րողի ասելուն) որպէս զի ով ընդունի՝ համաձայնուի, ով ոչ՝
սպասէ մինչև ժողովը։ Այլ և այդ թուղթը պատուիրում է ժո-
ղովի մէջ բերել և հետազօտել, ուրեմն ինչպէս կարէր այդ ռամ-
կական ոճով գրուիլ, քանի որ այդ ամբոխման կարծեցեալ վճիռ-
ները գրաբար են։ Եւ ոչ միայն այդքան, յիշեալ վճիռները
կրկնում են թղթի մէջ եղած վկայութիւններից, սակայն ոչ թէ
ռամկոսէն, այլ գրաբար, որ և պարզ ապացոյց է այդ թղթի գէմ։
Սակայն նախ թղթի ներքին բովանդակութիւնից բերենք ան-
հրաժեշտ ապացոյցները։

Գրիգոր Անաւարդեցու նման գիտնական անձը չէ կարենում
այստեղ արամաբանօրէն պատճառաբանել. նա մինչև անգամ մո-
ռանում է որ Հայոց հետ գործ ունի, ուրեմն և Հայոց գրուած-
ներից կամ հին եկեղեցական Հայրերից պէտք է բերէ վկայու-
թիւններ՝ Հայոց համոզելու համար, մինչդեռ նա վկայաբերում է
օտար եկեղեցու նոր գրութիւններից և ժողովներից՝ այն ևս
խիստ ծեքումներով։ Միթէ կարելի է այսպիսի մի բանաւարու-
թիւն վերագրել նորան։ Տգէտ կեղծողը մինչև անգամ այսպիսի
պատճառաբանութիւն է անում. «ունէաք վկայ . . . զհայգրին»
և զվաներն որ յամէն օր կու երթան վարչ մի ջուր բերեն և
ի նշխարն խառնեն, և զայն նշխարն ողջ ի գինին դնեն . . . »
ուրեմն Հայերն ևս ջուր են խառնում . . . :

Թուղթն այն աստիճանի կարկատուած է, որ սկզբում ասում է.
«Յիշումն ձեզ, որ երեկ ձեր էրէյդ Ատեփաննոս, և երբ զձեր
պատուելի թուղթս, զոր յիշէիք, երբ եկիք առ մեզ հերուի տա-
րին ի Սիս։ Նայ մեք խօսեցաք թէ ջանայ և օգնէ մեզ որ մինչ

կենդանի կանք զերծանինք ի բանադրանաց, և ընդունինք յեկեղեցին Աստուծոյ: Մինչդեռ յետոյ ինքն է խնդրում որ Հեթում չնեղանայ և անպատճառ այդ գործը գլուխ բերէ:

Բերում է վկայութիւններ և ապա ասում. «Ձայս գրիս զկանոնքն և զհիւսացւոյն ջուրն, մանաւանդ զԱյասին, վկայ է Աստուած որ զայս յառաջի անցեալ տարին տեսայ. . . » այնպէս որ գրեթէ բոլոր պատճառաբանութիւնները լոկ իւր խօսքով է ուղղում համոզելի դարձնել և մինչև անգամ յաճախ ստախօսում է, որպէս իսկոյն օրինակներ կ'առնենք:

Հեղինակն ասում է, որ ինքն միշտ ջուր է խառնում պատարագի մէջ, բայց «*Զաճկապէս*» և սպասում էր, որ այդ նորամուծութիւնը ժողովով հաստատուէր. այս շատ բնորոշ տեղեկութիւն է հեղինակի անձի նկատմամբ, որի բարեպաշտական ճշմարտասիրութեան մասին խօսք չի կարող: Ահաւասիկ օրինակ.

«Մեք կամիմք, որ այժմ երբ հրաման կուտամք լիսն ջրին, նա որպէս առհաւատչեայ և գրաւական և ռիմոն յիշեմք զամենայն իրք զոր պարտ է յիշել, և յառաջն զայս ասեմք զոր իդէպէ, որ մեր հայերոյն արեւելցեաց մեծերոյն զիրքս գիտացուցել ենք և կեցուցել, առաջինն Օրբելին, որ Սիւնեաց արհիեպիսկոպոս, որպէս հոգեւոր իշխան գլով նոյնպէս և մարմնաւոր, և իւր ընկերայն ցուցաք զգրւին (sic!) և հաստատեցաք այս տարի, և յանցեալ տարին տէր Յովհաննիսի առաքելոյ եպիսկոպոսին, և ի միւս այլ ամին Բջնեցոյն և Վարազեցեայ: Զի այժմ երբ ստոյգ մտաւ կուածեմ, նա Գ. ամ է որ այդ առիս ճշմարտապէս յիսուկել է . . . »:

Այս արդէն պարզապէս ստախօսութիւն է, որպէս գիտենք գոնէ Օրբելեանների գրութիւններից: Այդպիսի ստութիւններով զրպարտում է Մովսէս Կաղանկատուեցու պատմութիւնը, Հայոց կաթողիկոսներին ևն: Սակայն գոքա մեզ չեն կարող զբաղեցնել. նայենք դարձեալ ուրիշ հանգամանքների, զի ասողներ ևս կ'լինեն թէ Գրիգոր Անաւարդեյին նոյնպէս կարող էր ստախօսել:

Արդ՝ թողնենք թղթի մանրամասնութիւնները, բաւականանք այդ բանի մի գիտողութիւններով և ուղղակի տեսնենք թէ այդ գրողն ո՞վ պէտք է լինի:

Այդ անձն ոչ միայն Գրիգոր Անաւարդեցին չէ, այլ և Հայոց կաթողիկոս չէ, նա ինքն ինքեան կաթողիկոս չէ համարում, նորան ունիթոս կեղծողներն են այդ սրտիւր տուել, այդ խղճուկ նամակի վրայ գնելով Գրիգոր Անաւարդեցու անունը:

Կրկնում եմ: այդ թղթի հեղինակը կաթողիկոս չէ: Եւ այդ խօսքն կտեսնենք:

Ար հեղինակը տգէտ ում է և ոչ Անաւարդեցու նման գիտնական, երեւում է նաեւ նորա հետեւեալ խօսքերից.

«Ո՛ր իմ պարոն, կու ասէ գիրքն, մի փոխեր զսահմանս, զոր եղին հարքն քո, և դարձեալ՝ որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնա օձ, և թէ այդ այդպէս կու ասէ, պատճառ ի վերայ սրբոցն է, որ զիւրեանց բովանդակ հարցն, զսկզբանէ սկսեալ կռապաշտութեան ցանկն քակեցին, ապա նոքա չէին նոցա հարք, զի նոցա որդիք Աբամայ մարմինն հին մարդն մեռաւ յաւազանն, և զՔրիստոս սգեցան, վասնորոյ ասաց. «մի կոչէք ձեզ հայր յերկրի, զի մի է ձեր հայր, որ յերկինս է», ապա և մեր հարքն Աստուծոյ պատկերքն և սուրբքն, և ցանկ և սահման նոցա օրէնքն են և կանոնքն, որ զայս գիրս կու պահէ և խաղաղացուցանէ՝ չէ զեկեղեցի աւերել և ի խռովութիւն ձգել և ի բանադրանք, վասն որոյ մէք զայս որ կու գրենք, չենք զհայրենի ցանկն քակել . . . »:

Այսպիսի մի բանավարութիւն չի կարելի մի «քրիստոնեայ» հոգեւորականից սպասել, եթէ նա փոքր ի շատէ կրթութիւն ունի:

Բայց հեռու չգնանք. հեղինակն ասում է. «Ի հայր է Ծայռ՝ էմ + Ենյն Գիրքն որ է հաւասարայ արժապն, որ հեղեւող արտաբերոցն իրենս յէշէ զԼուսն, հայնդ որ էմ + Ենյն Գրեալ է էւր յեռօքն էւր առնցն Ժանն Զրէն»:

Արդ որտեղից գիտենք թէ Գրիգոր է. Անաւարդեցին + Ենի կաթողիկոս է ունեցել, և ոչ մի տեղից: Այդ կրկնում է նա միանգամ ևս, պատմելով մի դէպք. «երբ քո պապանց ժամն, աւագ պարոնն կամ Հեթում թագաւորն բերին զԱնտիոքայ պատրիարքն զՔուսնկն ի Սիս, որ ինքն և տէր Կոստանդին Կաթողիկոսն պատարագեցան ի ս. Սոփի, նա կութւենա՞ քեզ թէ պատրիարքն

Անտիոքայ անջուր առնէր, և մենակ ս. պատն չձգէր ըստ կանոնացն վատահի, նայ ջրով արար ի ս. Սօֆի, և տէր կոստանդին կաթուղիկոսն զնոյն ջրովն պատարագեց հետ իւր, և հաղորդեցաւ ի նմանէ: Եւ դայս աւուր Եւսեբ յէմ Բեռնի, որ ունի Ստեփաննոս սարկաւագն, և Հեթում թագաւորն պատուելեաց հետ իմ Բեռնի ի յանէլ-ըն և ի Ժողով, թէ Անտիոքայ պատրիարքն և մեր կաթուղիկոսն պատարագեցան ի ս. Սօֆի, ընդ որ յոյժ զարմացան:

Սակայն Յունաց պատմիչ Գէորգ Պախումիոսից (Բ, 52) գիտենք հաստատապէս, որ Անտիոքայ յոյն պատրիարք Արսենիոսն է հաղորդուել Հայոց թագաւորի հետ, ուստի և Յոյներից գահնկէց է եղել. իսկ այդ գէպքը պատահել է շուրջ 1289 թուին, ըստ որում Հեթում երկրորդն և ոչ Հեթում առաջինն ժամանակ: Ուրեմն նամակագիրը չէր կարող Հեթում Բ-ին գրել թէ «երբ քո պապանց ժամն, աւագ պարոնն կամ Հեթում թագաւորն բերին զԱնտիոքայ պատրիարքն...»: Արդ՝ ամեն տարակոյտից վեր է, որ այս նամակն չէ գրուած առ Հեթում երկրորդը. գրողն ուրեմն Գրիգոր Անաւարդեցուց շատ ուշ է ապրել և Հեթում Բ-ին ժամանակակից չէ:

Սակայն, որպէս ասացի, թղթի գրողը կաթուղիկոս էլ չէ. ահա ապացոյցը.

«... և հաւանիմք թէ Հայոց Կաթուղիկոսն Եւսեբի, և Աղլանից կաթուղիկոսին, և ամեն արեւելից և արեւմտից, որ երբ ժողով առնես նայես ցուցանեմ:

Նա այդպէս չէր խօսիլ Հայոց կաթուղիկոսի մասին, եթէ ինքըն ևս կաթուղիկոս լինէր: Բայց աւելին կայ.

«Զաղթամար օրհնել ետուր, նա տուր օրհնել զմեզ այլ: Վասնորոյ և մեք այժմ մեր եպիսկոպոսներովս մինչև մեծ ժողով լինի, զի կաթուղիկոսն և Գ. եպիսկոպոսն ժողովէ, նա հրամանն կուտանք և վերցնենք զայն նզովնին և զանէծքն... Եւ հրամանն կուտանք և կու օրհնենք, որ ձեր երկիցանին ջուր խառնեն...»:

Վերոյգրեալ մա տուր զմեզ օրհնել, խօսքերը ցոյց են տալիս, որ հեղինակը կամ եկեղեցական չէ և կամ Հայոց եկեղեցուց ան-

ջատուած (կամ օտար) ոմն է: Այդ հաստատուում է այլ տեղ
ևս. զորօր:

«Եւ մեր ոմնն Նախնայ ընկերօն մնացաք մինչև ամէնքս ի մի Կեղ
Գաւառ մեր Գլխաւորն և ընկերօն: Ապա առ այժմ կուլիշեցնենք
մեր ընկերայն և եկեղեցականացն, և յերոցդ, վասն որ չմնանք ի բա-
նագրանք...»:

Եւ դարձեալ.

«Դու զայդ մեծ սէրդ արարեր Աստուծոյ հարհօքն, և թէ
զայդ այլ կարես առնել, որ զմէջ օգնել աս և Աստուծոյ եկեղեց-
այն միաբանն, նա համարեալ թէ Քրիստոս ես զմեծի դժոխոցն
արեամբ կու աղատես քեզ հագով և մարմնով ծառայք և միշտ
ալօթողք և օրհնողք, զի եղեր մեզ առաքեալ և յուսուորիչ,
և երանելի եղև քո ամեն ազգն»:

Սակայն բաւական է և շատ է այսքանս:

Այս թղթի անհարազատութեան ուրիշ արտաքին վկայութիւն-
ներ գտնուած ենք նաև Սոյ ամբօխման կարծեցեալ վճիռների մէջ,
որպէս յիշուեցաւ: Պալիէնիցի պատմութեան մէջ թղթին հետե-
ւում են դրա. նախ գնում է սա Գրիգոր Անաւարդեցու մահուան
և կոստանդնի գահակալութեան (ի թւին Հայոց 28-րդ) պատ-
մութիւնը, հապա գնում է յիշեալ վճիռը: Մեզ կմնայ գիտո-
ղութեան ենթարկել այդ ևս և ապա զիմել ուրիշ պատմու-
թիւնների: Արդ 1307 թուի արքայական վճռի մէջ, ըստ Պալիէն-
ցի աւանդածին, ասուած է հետեւեալն, որ ակնյայտնի հերքումն
է այդ թղթի հարազատութեան:

«Հայցուած և զինդիր լի իմաստութեամբ, մանաւանդ թէ զհոգևորա-
կան և զաստուածային իր, զոր քրիստոսազօր և բարեյաղթ Թադևոսն Հայոց
Լէոն ջերմ և ևուսիափաղ խնդրեաց ի սրբազան կաթողիկոսէն Հայոց Տէր Գրի-
գորիօսէ հոգալ վասն միաբանութեան կարգաց և աւանդութեան սրբոյ ե-
կեղեցւոյն Քրիստոսի, որպէս զի ընդ մեծի եկեղեցւոյն Հռովմայ և այլ
սրբազան և ուղղափառ եկեղեցեացն Քրիստոսի և Հայաստանեայցս եկե-
ղեցի կալցէ հաղորդութեամբ աւանդութեամբ և տօնիւք, որպէս զի եղի-
ցի մի մարմին անարատ ս. եկեղեցին, յօգեալ ի մի ճշմարիտ գլուխն ի
Տէրն մեր և Աստուածն Քրիստոս, զոր իբրև տեսեալ երիցս երանեալ ս.
Հայրն մեր Տէր Գրիգորիոս, ծանեալ զայսպիսի խնդիր ի Հոգւոյն Սրբոյ

աղղիտ ի սիրտ եւ յոյի բարեպաշտ արքային Լէոնի, յոյժ լցեալ խնդութեամբ, փոփոխութիւն ի յօժար կամաց եւ ի սրտ, սկիզբն արարեալ այսմ աստուածային իրողութեան, մեծաւ քննութեամբ եւ խուզմամբ փորձեալ, եւ տեսեալ ի հարկաւորացն գոյ ի ս. խորհուրդն ի կիր արկանել զջուրն, եւ մերս եկեղեցւոյ աւանդեաց ունել, որպէս եւ այժմ ունի մեծ ս. եկեղեցին Հռովմայ եւ այլ եւս սրբազան եւ ուղղափառ եկեղեցիքն քրիստոնէից, եւ զայն վկայութեամբ աստուածաշունչ դրոց եւ հարցն վարդապետութեամբ քննեալ աւանդեաց մեզ, եւ խոստացաւ զի ի դիպող ժամու մեծաւ ժողովով հաստատեսցէ յեկեղեցիս Հայոց.

Եւ զայն կնքեալ աստուածայնօր դրօք եւ աւանդութեամբ ս. հարցն, առաքեաց առ ս. եւ բարեպաշտ Թադեւոսն Լէոն, որպէս զի ի դիպաւոր ժամանակի ի մեռն ժողովոյ մեծի հաստատեսցի այսպիսի աւանդութիւնքս ի Հայաստանեայցս եկեղեցի եւ առ բարձումն թերութեան սորա, մանաւանդ թէ յեղձումն նախանձ եւ առեւելութիւն իրին, որ էր մնացեալ ի սմա ի չարէն:

Եւ քանզի ոչ ժամանեաց ս. երջանիկ հայրն մեր, որպէս խոստացաւ ժողովով հաստատել զայսպիսի մեծ եւ աստուածային իր, եւ տալ իւրում եկեղեցւոյ եւ հաւատացեալ նմա ի Քրիստոսէ հօտին. քանզի վերափոխեալ եղև առ Տէրն մեր Քրիստոս առ որ անձկացեալն էր, Յաղագս որոյ մեծ եւ քրիստոսասէր թագաւորն Լէոն, որպէս եւ ունէր (հրաման) ի ս. կաթողիկոսէն ժողով առնել, պատշաճ համարեցաւ ժողով առնել.

Ուրեմն Գրիգոր Անաւարդեցու հետ գործ ունեցողը Լէոն թագաւորն է եւ ոչ Հեթում. Լեոնն է խնդրում նորանից այդ փոփոխութիւնները. Անաւարդեցին խոստանում է ինքն ժողով գումարել եւ հաստատել այդ ծիսական քանի մի նորութիւնները, վասնորոյ եւ ժողովում է վկայութիւններ՝ իւր փոփոխութիւնները վաւերացնելու համար: Եւ միայն այդ վկայութիւններն է ուղարկում առ Լէոն եւ ոչ առ Հեթում: Ուրեմն այդ որոշումնեքի հեղինակն անգամ չգիտէ այդ նամակի գոյութիւնը, մանաւանդ որ ասպա բերուած վկայութիւնները գրաբար են եւ ոչ աշխարհաբար: Դոքա շատ եւ շատ աւելի են, քան թէ նամակի մէջ, սակայն եւ այնպէս ասուած է որոշման հեղինակից:

.... «այլ եւս յղովք ի սրբոցն խօսեալ են ի ս. խորհուրդս, զորոյ զտեսութիւնն գտաք ԲՈՒՆԴԱՅԻՆՈՒԹԵԱՆ լիով ի նամակ սրանչեւի հօրս մերոյ Գրիգորիոսի: Սա չունի նաեւ այն վկայութիւններն, որոնք ըստ յիշատակութեան՝ այդ վճռի պէտք է ունենար:

Իսկ Լէոն լաւ գիտենալով, որ իւր կարգադրութիւնները գուրս

են իւր իրաւասութիւնից և ոչ մի հեղինակութիւն չեն լինիլ, ԸՆԴՈՒՆՈՒՄ է իբր թէ Անաւարդեցու հրամանները:

«յոյժ հաւանութեամբ և պատուով ընկալաք զհրամանս ս. հօրս, և զսոյն իբրև ճշմարիտ և զառաքելական կանոն և զօրինադրութիւն հաստատեցաք յեկեղեցիս Հայոց»:

Իսկ այդ նորութեան հիմունք են ցոյց տալիս ոչ թէ միաբանութեան նպատակն, այլ թէ.

«Զի թէպէտ սոյնպիսի աւանդութիւնք և ս. կարգադրութիւնք տէրունական տօնից ի կանուխ ժամանակաց սկսեալ ի ս. Նուսաւորչէն գոյր յեկեղեցիս Հայոց (???) և պահիւր սոյն սովորութիւն բազում և երկար ամօք, և ի պատճառէ իմեքէ բարձեալ եղև: Սակայն արդ ողորմութեամբ և շնորհօքն Աստուծոյ ի ձեռն եպիսկոպոսապետին Գրիգորի և բարեպաշտ տեառն մերոյ Նեոնի ընկալաք վերստին.....»:

Արեւմտ սորանով ևս հերքւում է թղթի հարազատութիւնը: Մի և նոյն ժամանակ ցոյց է տալիս որ այդ որոշողներն իսկապէս ոչ մի իրաւասութիւն չունէին, այլ միայն ընկալուչք էին իրեանց վճիռների ըստ իւրեանց խոստովանութեան:

Թէ Սոյ և թէ Ատանայի արքայական ժողովակների այդ պատմութիւնը միապազաղ մի գրութիւն է, այնպէս որ չենք կարող տեսլ թէ մի կէսը յառաջ է գրուել՝ միւսը յետոյ: Պէտք է ընդունենք, որ առաջինն ևս երկրորդի հետ միասին է գրուած: Այդ պարզապէս երևում է այն կտորից, որ անմիջապէս հետևում է առաջինի անուններին: Ահաւասիկ այդ.

«Եւ յորժամ կատարեցաւ գործս այս աստուածային առաջարկութեամբն և ուրախ եղաք ի Տէր. ինքն որ սկզբնաչարն է և ամենայն բարեաց հակառակ, գրգռեալ շարժեաց զոմն անօրէն ի ժանդ ազգէն, որ կոչի թաթար, Բուլարղու անուն նորա, զոր սակս պահպանութեան երկրիս մերոյ բերեալ եղև. յարուցեալ ի գիշերի միում յանկարծ եկեալ ի վերայ թագաւորին Լէօնի և սպան զնա, ընդ նմին և զթագաւորահայրն Էւթիմիմ, և այլ ևս յիշխանացն, և անհնարին աղետիւքս այս վանեալ էաք ի խոր խաւարի. և ի գիշեր տրտմութեան պաշարեալ, ոչ մնայաք խաղաղութեան լուսոյ. և մինչ յայս էաք՝ անյոյս լեալ ի մարդկանէ՝ և առ Աստուած ապաւինէաք և յօգնութիւն օրբոհոյ Աստուածածնի. Զոր ոչ իսպառ բար-

կացաւ, այլ ետ մեզ ճիւղ օրհնութեան զգաւակն բարի, զեղբայրն թագաւորահօրն Հեթմոյ, զորդին Լէօնի արքային, զարքայն Օշին, զի մի իբրեւ զՍողոմ լիցուք և Գոմորայ նմանեցուք, Վասնորոյ և կրտսեր գոլով նա յեղբարս իւր խորհրդեամբ առ զօրհնութիւն հայրենի ըստ Յակոբայ և Յովսեփայ Նփրեմի, ծագեաց արեւ տրտմութեան գիշերոյ և դարուն զուարթ արար կապանաց ձմերան, եւ որչափ առաւել տրտմեցաք ընդ վշտին, նա ևս կրկնապատիկ ուրախացաք ընդ լուծումն նորին, ուստի օծմամբ Ս. Հոգւոյն օծաք թագաւոր ի թվիս Հայոց 2ԾԷ, եւ սոյն կանոնիւս, զոր վերոյ յիշեալ եղև՝ դարձեալ սովաւ վարեալ առաջնորդէաք ժողովրդեան մերոյ, և վասն այսր սկսան ոմանք հակառակիլ ընդդէմ կանոնիս աստուածային և ժողովեալ բազումք ի միմեանց սադրելոյ՝ բազում ամբոխ յարուցին և աղմուկ շփոթման արկին, եւ աստ զի՞նչ ասեմ զգործ արքայիս մերոյ և զջերմութիւն սորա առ աստուածայինսն, զի ըստ մեծին Յովսեփայ նախանձուն, ըստ Եզեկեայ անուանի բարեպաշտութեան, ըստ Սողոմոնի յարգարիչ տանն Տեառն, ընդ Դաւթի հեզութեան, նաև ճշմարիտ աստուածապաշտից համայննմանից իւրոյ քրիստոնէից, ասեմ զկայսերաց և թագաւորաց, զԿոստանդիանոսի, զՏրդատայ և զԹէոդոսիցն, Զի որպէս նոքա ի ձեռն ս. հարց հաստատող են ուղղափառութեան, սոյնպէս և սա ցրուեաց զհակառակողսն միմեանց, եւ վերստին ժողովեալ զտէր Կոստանդին կաթողիկոսն բազմութեամբ եպիսկոպոսաց իւրոց և վարդապետաց և հարց վանօրէից, ամրացուցեալ ընդարձակ վկայութեամբ Աստուածաշունչ գրոց և հարց սրբոց զվերոյեդեալ կանոնն, եւ ամենեցուն հաւանութեամբ ձեռնադրեալ ամրացուցին ի փառս Աստուծոյ, որ է այդ զոր ունի կարգս առաջիկայի ի տեսանել:

Սորան հետևում է այս վերնագիրը.

«Երկրորդ ժողով՝ որ եղև յԱռանա քաղաք, ի ժամանակս քրիստոսասէր թագաւորին Հայոց Սշնի և սրբազան կաթողիկոսին Կոստանդեայ ի թվին Հայոց ԼճԾԷ:

Ուրեմն այս ժողովալը պէտք է եղած լինի 1309 թուին և այդ ժամանակ վերելի և դորս վճիռները հեղինակուած: Սա ևս ոչ թէ նոր ինչ է խօսքի ենթարկում, այլ Գրիգոր Անաւարդեցու կարծեցեալ «կանոններն» է վերստին ընդունում կամ թերեւս վաւերացնում. ուրեմն արքայադանները գործում էին դարձեալ վախճանուած կաթողիկոսի ստուերի տա՛լ խաբէութիւն գործելով: Այս մի նշանաւոր կէտ է, որ ուշադրութիւնից չպէտք է ձգել, որ հասկանանք նաև Կոստանդին կաթողիկոսի վիճակը,

զի վերջինս չէր կարող ելնել երկու կրակի միջից. արդեօք ընդունել այդ շինծու կանոնները, թէ ժխտել դոցա ճշմարտութիւնն և հետեւաբար սուտ դուրս բերել դոցա հեղինակին, որ իւր նախորդն էր համարուում:

Այդ՝ վերջին փճուի մէջ ասուած է:

«Ճշմարիտ գլուխն և խաղաղութիւնն եկեղեցւոյ սրբոյ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ՝ հաշտեցուցանել զՎայր ընդ արարածս իւր, որ և ասաց ընդ աշակերտս իւր. «զխաղաղութիւն իմ թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»։ Նա ինքն որպէս պատուիրան նոր սիրոյ ետ մեզ սիրել զմիմեանս. զնոյն ինքն ծանօթի աշակերտութեան դարձեալ ուսոյց մեզ սոյնպէս ասելով. «յայսմ ծանիցեն ամենեքեան թէ իմ աշակերտք էք, թէ սիրեցէք զմիմեանս»։ Արդ՝ նոյն ինքն կամելով և այժմ զմիջնորմն ցանկոյ հակառակութեան՝ զոր էր ի չարէն՝ բառնալ յեկեղեցւոյ իւրում սրբոյ, և զվարատումն և զցրումն անդամոց իւրոց միացուցանել դարձեալ ի մի մարմին իւր, եւ ճշմարիտ յօգամամբ սիրոյ զամենեւեան կապեալ ի մի գլուխ յինքն Քրիստոս Աստուած մեր, Յաղագս որոյ ապա խոթեալ ի սիրտ և յոգի սրբազան կաթողիկոսին տէր Գրիգորի և քրիստոսազօր և բարեպաշտ թագաւորին Լէոնի. զարթուցեալ և զհոգի քրիստոսազգեսաց կրօնաւորին Յոհաննիսի, որ էր ըստ իշխեցողութեան պատուոյ պարոն Հայոց և թագաւորահայր, հոգալ վասն սիրոյ և միաբանութեան ս. եկեղեցւոյ և փութալ ի բարձումն խռովութեան չարին, որոց իբրեւ առեալ զազդումն յոգի անգէն խոցեալ միաբանութեան սիրով ի սիրտ և վաղվաղակի իբրեւ տեառն ի գործ պատրաստական, և իբրեւ ժիր մշակ ի վաստակ և ի սպասաւորութիւն պատուիրանին Աստուծոյ, Սոյնպէս ածին և մոռին զանձինս իւրեանց ի գործ պաշտաման և հրամանի Տեառն յօժարութեամբ սրտի և կամաց, և զպառակտումն մեր՝ որ ի մեծ եկեղեցւոյն Հռովմայ և յայլ ևս եկեղեցեացն Քրիստոսի էր յաղագս գոհութեան բաժակին Տեառն.....

Արդ զայսպիսի բաժանումն մեր որ ի կաթողիկէ եկեղեցոյ, փութացան բժշկել՝ միացուցանելով դարձեալ զմեզ ի մի կաթողիկէ եկեղեցի սուրբ և ի մի մարմին Քրիստոսի, եւ վասն զի չարք ոմանք շարժեալք ի չար սրտէ անտի բանսարկուէին յաղագս խռովութեան և հակառակութեան պատճառի, մանաւանդ թէ բաժանման ի սրբոյ եկեղեցւոյն Քրիստոսի, կանոնեցին կանոնս և գրեցին սահմանս ևս յանիրաւ ժողովս իւրեանց, աւանդելով մեզ յերիսս յայսորիկ ոչ ունելով հաղորդութիւն ընդ այլ ևս քրիստոնեայսն

Ապա խօսում է վերստին զանազան վկայութիւններով և յե-

տոյ կրկնում է այն՝ որ Գրիգոր Անաւարդեցին քննել է և կանոններ դրել, փոխելով մի քանի պաշտական և տօնական կարգեր, բացի սրբերի և այլ ազգային տօների: Կրկնում է նոյնպէս որ այդ գրելով ուղարկել է առ Ղևոն թագաւորը, նման առաջին պատմածին: Պատմում է նոյնպէս որ բազմաթիւ խռովութիւններ են եղել դորա դէմ և հակառակել են, ասելով որ այդ փոփոխութիւնները ս. Գրիգոր Ղուսաւորչի առաքելական կանոններին ընդդէմ են: Վասնորոյ և Սշին յայտնել է Կոստանդին և հրաման հանել ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրոյ, եղած եպիսկոպոսներն, վարդապետներն ու հայրերը ժողովուին և չարք վերացնեն: Եւ հաւաքուելով հաստատում են նոյնը, տեսնելով զի ըստ հետի և շաւղաց ս. Գրիգորի մերոյ Ղուսաւորչին և առաքելական կանոնացն էր, և ոչ որպէս նոքա ընդունայնաբանէին:

Ուրեմն երկու փճիւնները մէկ են համարւում և դրուել են յանուն Գրիգոր Անաւարդեցու, որով ժխտում են թէ վճռողների և թէ Կոստանդին կաթողիկոսի իրաւասութիւնը, թէ և չենք կարող ասել թէ վերջինս համախոհ եղած լինի լիապէս: Իսկ թէ Անաւարդեցին արդարայնում է դոցա զրպարտութիւնը, չենք կարող և ոչ մի տուեալով ապացուցել: Այդ գրութիւններն ուղղակի Ղևոն և Սշին արքաների հեղինակութիւններն են: Իսկ շուրջ 1308-ին կեղծ թղթի գրողն է Անաւարդեցու մի ազգականն, որ ուղղակի զրպարտում է իւր քեռուն, իսկ ապա այլք են այդ թուղթը Անաւարդեցուն վերագրել:

Բայց այսով չէ վերջանում մեր ասելիքը: Դեռ մնում է մի բան ևս՝ արդեօք ինչ էր այդ որոշումների նպատակը: Մի՞թէ միանալը Հռովմէական եկեղեցու հետ, որպէս ասում են Հռովմէականները: Քաւ լիցի. այդ ուղղակի ստախոսութիւն է, որ հերքւում է նոյն իսկ իւրեանց յիշած և վերեւ խօսուած գրութիւններից:

Այդ որոշումների և գլխացաւանքների նպատակն էր Ռիայն Դէ Դաբաւան-Դէ-ն հասարակել Բուր Բիւրաշէական եկեղեցիներէ Դեջ, որպէս զի գոնէ արտաքին յարաբերութիւնների մէջ սէր լինէր և հաղորդակցութիւնը հշտանար:

Որ այդ այդպէս է՝ տեսանք նաև վերեւ քանիցս անգամ ոչ

մի տեղ չէ ասուած թէ պէտքէ Հռովմէական եկեղեցուն հետեւել, այլ բոլոր եկեղեցիներին: Այս ձգտումն եղել է ի հնուց, նոյն իսկ Ներսէս Շնորհալու ժամանակ և քրիստոնէական գաղափար է, թէև անիրագործելի է և մարդկային ինքնասիրութեան պատճառով շատ և շատ վնասակար է իւրաքանչիւր փոքր ազգի համար: Մինչև անգամ թաթարաց խաները յորգորում էին քրիստոնեաներին՝ միանալ թիւրքերի դէմ՝ ուստի և պատգամ էին ուղարկում առ բոլոր քրիստոնեաները: Վասնորոյ և յիշեալ որոշումների մէջ շարունակ կրկնւում է որպէս և այժմ ունին տիեզերական և մէծ եկեղեցիքն, ս. և մեծ եկեղեցին Հռովմայ և Կ. Պոլսի, Աղեքսանդրոյն և Անտիոքայն և Երուսաղէմին, որպէս և այլ քրիստոնեայքն ունին, և այլ նման խօսքեր: Մինչև անգամ կեղծուած թուղթն ասում է. «մերն առ մեզ մնասցէ մինչև ցայժմ, ուղւում է միայն հաղորդակցութեան արգելքները վերացնել և ընդունիմք զամենայն քրիստոնեայք զՀռոմոց եկեղեցւոյն, զի այն մերձ է առ Աստուած որպէս աթոռօցն . . . և զպարիարգն և երկրպագեմք, զի Քրիստոսի ս. անուամբն քրիստոնեայք կոչին ուղղափառ»: Ուրեմն յորգորում է յարմարցնել և ընդունել այլոց և ս. Հայոց եկեղեցու մէջ: Իսկ այն դաւանանքները, ծէսերն ու տօներն, որոնք արգելք չեն և ուրիշ եկեղեցիներում ևս զանազան են, չէ թոյլագրում փոխելու: Միայն այդպէս էին տալալինում Վատինաց, Յունաց, Հայոց և Ասորոց, այլ և մինչև անգամ Հաշիշների (մահմետական աղանդ) մէջ միաբանական սէր և հաղորդակցութիւն հաստատել, որպէս զի միացած կռուել կարենային թշնամեաց դէմ:

Դարձեալ ասում եմ. եկեղեցական միաբանութեան այդ ձգտումներն եղել են ոչ թէ ըստ ումանց բաղձանաց՝ Հռովմայ հետ միանալու, այլ բոլոր քրիստոնէական եկեղեցիները միացնելու համար ի մի գլուխն Քրիստոս, այդ ևս քանի մի արգելքները վերցնելով:

Այժմ տեսնենք թէ այդ ձգտումների հակառակորդներն ինչ են ասում:

(Շարունակելի)

Ա. ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆ